ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2494 - Ա **10 ապրիլի 2009թ.**

ՌՈՍՏՈՄԻ ՓՈՂՈՑԻ Հ. 64/8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԺԻԿ ԵՐՎԱՆԴԻ ԽՈՋԱԲԱՇՅԱՆԻ, ԵՐՎԱՆԴ ԳԵՎՈՐԳԻ ԽՈՋԱԲԱՇՅԱՆԻ, ՀԱՅԿՈՒՀԻ ԳԵՎՈՐԳԻ ԽՈՋԱԲԱՇՅԱՆԻ, ԼԱՐԻՍԱ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ, ԳՈՀԱՐԻԿ ՎԱՀԱՆԻ ԴԱԴԱՄՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անժիկ Երվանդի Խոջաբաշյանի (ծնված 20.09.1936թ.), Երվանդ Գևորգի Խոջաբաշյանի (ծնված 24.06.1975թ.), Հայկուհի Գևորգի Խոջաբաշյանի (ծնված 27.09.1970թ.), Լարիսա Գևորգի Վարդազարյանի (ծնված 28.07.1968թ.), Գոհարիկ Վահանի Դադամյանի (ծնված 09.08.1946թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ռոստոմի փողոցի հ.64/8 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 135.57քմ, որից 99քմ մակերեսով հողամասն Անժիկ Երվանդի Խոջաբաշյանի, Երվանդ Գևորգի Խոջաբաշյանի, Հայկուհի Գևորգի Խոջաբաշյանի, Լարիսա Գևորգի Վարդազարյանի, Գոհարիկ Վահանի Դադամյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 36.57քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1991 թվականը, 16.04.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիր, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 23.04.2008թ. հ.1756ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 06.04.2009թ. հ.20/2-Ե/191 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 27.03.2009թ. հ.20-Ել-2418 եզրակացությունը, համաձայն որի Ռոստոմի փողոցի հ.64/8 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ռոստոմի փողոցի հ.64/8 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անժիկ Երվանդի Խոջաբաշյանի, Երվանդ Գևորգի Խոջաբաշյանի, Հայկուհի Գևորգի

Խոջաբաշյանի, Լարիսա Գևորգի Վարդազարյանի, Գոհարիկ Վահանի Դադամյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 99քմ մակերեսով հողամասին կից 36.57քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 36.57քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Ռոստոմի փողոցի հ.64 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Ռոստոմի փողոցի հ.64/8 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Անժիկ Երվանդի Խոջաբաշյանի, Երվանդ Գևորգի Խոջաբաշյանի, Հայկուհի Գևորգի Խոջաբաշյանի, Լարիսա Գևորգի Վարդազարյանի, Գոհարիկ Վահանի Դադամյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա.Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**